

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

(ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Հայաստանի Երիտասարդության Ազգային Խորհուրդը (այսուհետև Ազգային Խորհուրդ) ոչ կառավարական, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը համադաշնության սկզբունքով միավորում է ՀՀ-ում օրինականորեն գործող հասարակական կազմակերպությունների:
- 1.2. Ազգային Խորհուրդը գործում է ՀՀ Սահմանադրության, գործող օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի եւ սույն Կանոնադրության հիման վրա:
- 1.3. Ազգային Խորհուրդը գործում է ՀՀ ողջ տարածքում եւ օտարերկրյա պետություններում, այդ երկրների օրենսդրությանը համապատասխան:
- 1.4. Ազգային Խորհրդի գտնվելու վայրն է.
ք. Երեւան, 0009, Կորյունի 15,
Հեռ. +374 10 56 03 09

2. ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2.1. Ազգային Խորհրդի նպատակներն են.
 - աջակցել ՀՀ հզորացմանը եւ ամրապնդմանը;
 - աջակցել ՀՀ-ում ժողովրդավարության խորացմանը, իրավական պետության եւ քաղաքացիական հասարակության կայացմանը;

- նպաստել ՀՀ-ում երիտասարդական քաղաքականության մշակմանը եւ իրագործմանը
- նպաստել ազգային խնդիրների լուծման գործում երիտասարդության մասնակցության ակտիվացմանը;
- օժանդակել մարդու, մասնավորապես երեխայի, պատանու եւ երիտասարդի իրավունքների պաշտպանության գաղափարի տարածմանը;
- միավորել հայ երիտասարդությանը հայրենասիրության, ազատության եւ ժողովրդավարության գաղափարների շուրջ;
- ապահովել երիտասարդական կազմակերպությունների փոխօգնությանը:

2.2. Ազգային Խորհրդի խնդիրներն են.

- օժանդակել երիտասարդական կազմակերպությունների կողմից համատեղ նախագծերի եւ ծրագրերի իրականացմանը;
- աջակցել երիտասարդության մտավոր, հոգեւոր եւ ֆիզիկական զարգացմանն ուղղված նախաձեռնություններին;
- պաշտպանել ՀՀ-ում եւ նրանից դուրս ապրող բոլոր հայ երիտասարդների իրավունքներն ու օրինական շահերը;
- աջակցել երիտասարդների սոցիալական խնդիրների լուծմանը;
- նպաստել գիտության ու կրթության՝ որպես առաջնային ոլորտի զարգացմանը, երիտասարդ կադրերի պատրաստմանը;
- աջակցել երիտասարդ ընտանիքներին;
- հանդես գալ երիտասարդ մարդկանց բարեկամության եւ համագործակցության օգտին ինչպես ՀՀ-ում, այնպես էլ նրանից դուրս;
- մասնակցել ազգային եւ միջազգային երիտասարդական ծրագրերի մշակմանը եւ իրականացմանը;
- կապեր հաստատել տարածաշրջանային եւ միջազգային երիտասարդական կառույցների հետ՝ նպաստելով ՀՀ-ի երիտասարդական կազմակերպությունների անդամագրմանը այդ կառույցներին;
- ՀՀ օրենսդիր եւ գործադիր մարմիններին ներկայացնել առաջարկություններ երիտասարդական քաղաքականության վերաբերյալ;
- համախմբել ՀՀ-ում եւ նրանից դուրս ապրող հայ երիտասարդությանը ՀԵԱԽ-ի նպատակների շուրջ:

3. ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ազգային Խորհրդի գործունեության հիմնական սկզբունքներն են.

- 3.1. Ազգային Խորհուրդը պատասխանատու չէ իր անդամ կազմակերպությունների, ակումբների, միավորումների գործունեության համար, իսկ կազմակերպությունները պատասխանատու չեն Ազգային Խորհրդի գործունեության համար:
- 3.2. Հարգալից վերաբերմունքը Ազգային Խորհրդին անդամակցող եւ աշխատանքներին մասնակցող յուրաքանչյուր կազմակերպության կարծիքի, շահերի եւ արժանապատվության նկատմամբ:
- 3.3. Կոլեկտիվ աշխատանքը, կոլեգիալությունը որոշումների ընդունման մեջ, ընդունված որոշումների կատարման համար փոխադարձ եւ անձնական պատասխանատվությունը:
- 3.4. Ազգային Խորհրդի բոլոր մարմինների աշխատանքներում քննարկումների ազատությունը եւ հրապարակայնությունը:
- 3.5. Մեծամասնության եւ փոքրամասնության իրավունքների հարգումը. մեծամասնության շահերը ապահովվում են կազմակերպության անունից հանդես գալու եւ գործելու նրա իրավունքով, կազմակերպության սեփականությունը տնօրինելու նրա իրավունքով, փոքրամասնության շահերն ապահովվում են դիրքորոշումն Ազգային Խորհրդում արտահայտելու նրա իրավունքով, սույն կանոնադրությանը, ինչպես նաեւ անդամ-կազմակերպությունների ծրագրային եւ կանոնադրական փաստաթղթերին չհակասող գործունեություն իրականացնելու նրա իրավունքով:
- 3.6. Ազգային Խորհրդի վերադաս ղեկավար մարմինների որոշումների կատարման պարտադիր լինելը ստորադաս մարմինների համար:

3.7. Ազգային խորհրդի յուրաքանչյուր մարմին իրավագոր է ընդունել որոշումներ, եթե նիստին ներկա է տվյալ մարմնի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումն ընդունված է համարվում տվյալ մարմնի նիստին ներկա անդամների մեծամասնության կողմ քվեարկելու դեպքում, եթե այլ բան չի նախատեսված սույն կանոնադրությամբ:

4. ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Ազգային խորհրդի անդամ կարող է լինել ՀՀ-ում գործող յուրաքանչյուր հասարակական կազմակերպություն, ինչպես նաև միջազգային հասարակական եւ օտարերկրյա կազմակերպությունների կողմից ստեղծված առանձնացված ստորաբաժանումներ, որոնք ՀՀ օրենսդրությանը համապատասխան գրանցվում են որպես հասարակական կազմակերպություններ, ընդունում են սույն կանոնադրությունը եւ իրենց գործունեությամբ նպաստում են Ազգային խորհրդի նպատակների ու խնդիրների իրագործմանը:

4.2. Ազգային խորհրդի աշխատանքներին կարող են անդամակցել հասարակական կամ հասարակական քաղաքական կազմակերպության երիտասարդական ստորաբաժանումներ, ուսանողական ինքնակառավարման մարմիններ, արհեստակցական միություններ, որոնց նպատակներն ու խնդիրները համահունչ են սույն կանոնադրությամբ սահմանված Ազգային խորհրդի նպատակներին եւ խնդիրներին:

4.3. Ազգային խորհուրդը կարող է ունենալ պատվավոր անդամներ՝ կազմակերպություններ կամ ֆիզիկական անձիք, որոնք մեծ ավանդ ունեն Ազգային խորհրդի նպատակների իրականացման գործում: Ազգային խորհրդի պատվավոր անդամ ընդունելու համար պարտադիր է իսկական անդամների 1/3-ի ներկայացումը եւ պատվավոր անդամության թեկնածուի համաձայնությունը:

- 4.4. Ազգային խորհուրդը ունի գործող անդամության երեք տեսակ՝ իսկական անդամ, թեկնածու անդամ եւ դիտորդ, ինչպես նաեւ կարող է ունենալ պատվավոր անդամներ:
- 4.5. Ազգային խորհուրդ անդամագրվելու համար կազմակերպությունը Ազգային խորհրդի նախագահությանը ներկայացնում է գրավոր դիմում, ինչպես նաեւ կազմակերպության կանոնադրությունը, գործունեության համառոտ ծրագիրը, կառուցվածքն ու ղեկավար մարմինների անձնակազմի տվյալները, նախագահության կողմից պահանջվող այլ փաստաթղթեր ու տվյալներ: Դիմումը քննության է առնվում Ազգային խորհրդի նախագահության առաջիկա նիստում:
- 4.6. Դիմումը մերժելու դեպքում տվյալ կազմակերպությունը կես տարի ժամկետով զրկվում է թեկնածու անդամ դառնալու համար դիմելու իրավունքից: Թեկնածու անդամը կարող է դիմել նախագահությանը իսկական անդամ դառնալու խնդրանքով, եթե այն ավելի քան կես տարի հանդիսացել է Ազգային խորհրդի թեկնածու անդամ: Դիմումը մերժվելու դեպքում տվյալ կազմակերպությունը մեկ տարով զրկվում է Ազգային խորհրդի իսկական անդամ դառնալու համար դիմելու իրավունքից: Ազգային խորհրդի նախագահության կողմից Ազգային խորհրդի թեկնածու կամ իսկական անդամ դառնալու դիմումը կրկնակի մերժվելու դեպքում կազմակերպությունն իրավունք ունի դիմել Ազգային խորհրդի համագումարին թեկնածու անդամ կամ իսկական անդամ դառնալու խնդրանքով:
- 4.7. Դիտորդ դառնալու համար անհրաժեշտ է, որ կազմակերպությունը բավարարի անդամագրվելու համար անհրաժեշտ բոլոր ֆորմալ պահանջներին: Թեկնածու եւ իսկական անդամ դառնալու համար կազմակերպությունը պետք է իր գործունեությամբ ապացուցի Ազգային խորհրդի անդամ դառնալու նպատակահարմարությունը: Անդամությանը հավակնող կազմակերպությունները պարտավոր են ակտիվորեն մասնակցել Ազգային խորհրդի բոլոր աշխատանքային մարմինների աշխատանքներին:
- 4.8. Ի տարբերություն դիտորդ կամ անդամության թեկնածու ընդունելու կամ հեռացնելու մասին որոշումների, իսկական անդամ ընդունելու մասին որոշումը

պետք է վավերացվի Ազգային խորհրդի համագումարի կողմից: Դիտորդ եւ թեկնածու անդամներ ընդունելու կամ հեռացնելու ընթացակարգը կանոնակարգվում է Ազգային խորհրդի նախագահության կողմից՝ անդամագրության մասին կանոնակարգով: Իսկական անդամներին Ազգային խորհրդի անդամությունից հեռացումը կատարվում է սույն կանոնադրության 4-րդ գլխի 15-րդ կետի համաձայն:

- 4.9. Ազգային խորհրդի իսկական անդամների իրավունքները:
 - 4.9.1. Պատվիրակ ունենալ Ազգային խորհրդի բարձրագույն մարմինը հանդիսացող համագումարում:
 - 4.9.2. Ի դեմս իր ներկայացուցիչների ընտրել եւ ընտրվել Ազգային խորհրդի ղեկավար մարմիններում:
 - 4.9.3. Պատվիրակ ունենալ Ազգային խորհրդի խորհրդակցական մարմինը հանդիսացող ներկայացուցիչների խորհրդում:
 - 4.9.4. Ներկայացնել առաջարկություններ սահմանված կարգով, պահանջել դրանց քննարկումը Ազգային խորհրդի բոլոր մարմիններում:
 - 4.9.5. Տեղեկություններ ստանալ Ազգային խորհրդի գործունեության մասին:
 - 4.9.6. Դիմել Ազգային խորհրդի մարմիններին եւ նրա անդամ կազմակերպություններին իր անդամների իրավունքների ու շահերի պաշտպանության, իր կանոնադրական խնդիրների ու ծրագրերի իրականացմանն օժանդակելու համար:
 - 4.9.7. Դիմել հարցերով ու հայտարարություններով Ազգային խորհրդի բոլոր մարմիններին եւ ստանալ պատասխան:
 - 4.9.8. Մասնակցել (անդամակցել) այլ հասարակական կազմակերպությունների եւ շարժումների աշխատանքներին, որոնց սկզբունքներն ու գործունեությունը չեն հակասում ՀՀ օրենսդրությանը եւ եթե այն չի խոչընդոտում Ազգային խորհրդի Կանոնադրության պահանջների կատարմանը:
 - 4.9.9. Ազատ դուրս գալ Ազգային խորհրդի կազմից կամ փոխել անդամության կարգավիճակը:
- 4.10. Անդամության թեկնածուին ունի սույն կանոնադրության 4-րդ գլխի 9-րդ կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթակետերով սահմանված իրավունքները:

- 4.11. Դիտորդը ունի սույն կանոնադրության 4-րդ գլխի 9-րդ կետի 5-րդ, 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթակետերով սահմանված իրավունքները:
- 4.12. Կազմակերպությունը չի կարող հանդիսանալ Ազգային խորհրդի իսկական կամ թեկնածու անդամ, եթե արդեն իսկ անդամակցում է այլ կազմակերպության (համադաշնության), որը հանդիսանում է Ազգային խորհրդի անդամ:
- 4.13. Ազգային խորհրդի պատվավոր անդամ կազմակերպություններն օգտվում են սույն կանոնադրության 4-րդ գլխի 9-րդ կետի 5-րդ, 6-րդ, 7-րդ եւ 8-րդ կետերով սահմանված իրավունքներից եւ Ազգային խորհրդի բոլոր մարմիններում ունեն խորհրդակցական ձայնի իրավունք:
- 4.14. Ազգային խորհրդի անդամ-կազմակերպությունը պարտավոր է.
- 4.14.1. Չխախտել Ազգային խորհրդի Կանոնադրությունը,
- 4.14.2. Մուծել մուտքավճար եւ անդամավճար, որոնց չափը սահմանվում է Ազգային խորհրդի ղեկավար մարմնի կողմից,
- 4.14.3. Կատարել Ազգային խորհրդի ղեկավար մարմինների որոշումները,
- 4.14.4. Աջակցել Ազգային խորհրդի գործունեությանը,
- 4.14.5. Ակտիվ մասնակցել Ազգային խորհրդի ստորաբաժանումների աշխատանքներին:
- 4.15. Ազգային խորհրդի այն անդամները, որոնց ներկայացուցիչները խախտել են սույն կանոնադրությունը եւ նրանից բխող այլ ակտեր կարող են հեռացվել Ազգային խորհրդի անդամությունից կամ ստանալ անդամության այլ կարգավիճակ համագումարի որոշմամբ, որին կողմ է քվեարկել անդամների 2/3-ը: Համագումարի նիստերի միջեւ ընկած ժամանակահատվածում նախագահությունը կարող է նախազգուշացնել անդամ-կազմակերպությանը: Նախազգուշացում ստանալուց հետո խախտումները չվերացնելու դեպքում կազմակերպության անդամությունը կարող է կասեցվել նախագահության որոշմամբ մինչեւ համագումարի առաջիկա նիստը: Կասեցման դեպքում անդամ-կազմակերպությունը ստանում է թեկնածու անդամի կարգավիճակ:

5. ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

- 5.1. Ազգային խորհրդի բարձրագույն մարմինը նրա համագումարն է, որը հրավիրվում է առնվազն տարին մեկ անգամ: Արտահերթ համագումար կարող է հրավիրել Ազգային խորհրդի նախագահության կամ վերստուգիչ հանձնաժողովի որոշմամբ, կամ Ազգային խորհրդի իսկական անդամների 1/3-ի պահանջով:
- 5.2. Համագումարին Ազգային խորհրդի յուրաքանչյուր իսկական անդամ ներկայացնում է 1 պատվիրակ: Անդամության թեկնածուները կարող են ներկայացնել 1 պատվիրակ, որի իրավունքները հավասար են իսկական ադամ-կազմակերպության պատվիրակի իրավունքներին, բացառությամբ ընտրելու եւ ընտրվելու իրավունքից: Ազգային խորհրդի անդամները համագումարից առնվազն մեկ շաբաթ առաջ գրավոր տեղեկացվում են համագումարի հրավիրման ժամկետների եւ օրակարգի մասին:
- 5.3. Ազգային խորհրդի համագումարը.
 - 5.3.1. Ընդունում է Ազգային խորհրդի Կանոնադրությունը եւ ծրագիրը, լրացումներ եւ փոփոխություններ մտցնում դրանց մեջ, ընդունում է Կանոնադրությունից բխող այլ ակտեր, լրացումներ եւ փոփոխություններ մտցնում դրանց մեջ, քննարկում եւ լուծում է Ազգային խորհրդի գործունեության հետ կապված ցանկացած հարց: Կանոնադրությունը ընդունվում եւ նրանում փոփոխություններ են կատարվում ներկա պատվիրակների ձայների 2/3-ով;
 - 5.3.2. Իր կազմից 2 տարի ժամկետով ընտրում է Ազգային խորհրդի նախագահ եւ նախագահություն;
 - 5.3.3. Իր կազմից 2 տարի ժամկետով ընտրում է վերստուգիչ հանձնաժողով;
 - 5.3.4. Ընտրում եւ ետ է կանչում ավագների խորհրդի անդամներին;
 - 5.3.5. Վավերացնում է ֆինանսական միջոցների եւ գույքի օգտագործման հաշվետվությունը;
 - 5.3.6. Լսում է ստորադաս մարմինների հաշվետվությունը նրանց կատարած գործունեության մասին;
 - 5.3.7. Վավերացնում է իսկական անդամների ընդունումը, հեռացնում անդամությունից:

- 5.4. Համագումարների միջեւ ընկած ժամանակահատվածում գործում է Ներկայացուցիչների խորհուրդը: Ներկայացուցիչների խորհուրդը խորհրդակցական մարմին է, որը հրավիրվում է առնվազն 4 ամիսը մեկ անգամ: Ներկայացուցիչների խորհրդին մասնակցում են յուրաքանչյուր իսկական անդամ եւ անդամության թեկնածու հանդիսացող կազմակերպությունների մեկական պատվիրակ: Ներկայացուցիչների խորհրդի պատվիրակ են հանդիսանում նախագահության բոլոր անդամները՝ ի պաշտոնե: Դիտորդի կարգավիճակ ունեցող կազմակերպությունները կարող են ներկայացնել եւս մեկական պատվիրակ, որի իրավունքները հավասար են իսկական անդամի պատվիրակի իրավունքներին, բացառությամբ քվեարկելու իրավունքից:
- 5.5. Ներկայացուցիչների խորհուրդը քննարկում եւ արտահայտում է Ազգային խորհրդի դիրքորոշումը կարելորագույն հարցերի շուրջ, ընդունում ուղերձներ, հայտարարություններ, քննարկում է Ազգային խորհրդի գործունեության կարելոր հարցերն ու ծրագրերը /որոշումները ընդունվում են ներկաների 2/3-ով/:
- 5.6. Ներկայացուցիչների խորհրդի որոշումները պարտադիր չեն Ազգային խորհրդի ղեկավար մարմինների համար: Ներկայացուցիչների խորհուրդը հրավիրվում է նախագահի, նախագահության, իսկական եւ թեկնածու անդամների 1/3-ի կողմից: Ներկայացուցիչների խորհրդի նիստերը վարում է իր կողմից ընտրված խոսնակը:
- 5.7. Ազգային խորհրդի նախագահությունը համագումարների միջեւ ընկած ժամանակահատվածում հիմնական ղեկավար մարմինն է: Նախագահության անդամ եւ նախագահ ի պաշտոնե հանդիսանում է Ազգային խորհրդի նախագահը: Նախագահության անդամները ընտրվում են համագումարի կողմից: Նախագահության անդամների ընտրությունից առաջ համագումարը սահմանում է նրանց թիվը եւ անհրաժեշտության դեպքում նաեւ պաշտոնները՝ ըստ առանձին ոլորտների եւ ծրագրերի:
- Ազգային խորհրդի նախագահության արտահերթ նիստ հրավիրում է Ազգային խորհրդի նախագահի, նախագահության անդամների առնվազն 1/3-ի եւ վերստուգիչ հանձնաժողովի որոշմամբ: Նիստերը Ազգային խորհրդի նախագահի բացակայության ժամանակ վարում է նախագահի կողմից լիազորված նախագահության անդամը, հակառակ դեպքում նախագահության նիստին ներկա

տարիքով ամենա ավագ անդամը, որը ստորագրում է նախագահության նիստի արձանագրությունը եւ ընդունված որոշումները:

5.8. Ազգային խորհրդի նախագահությունը.

5.8.1. Իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ;

5.8.2. Մշակում եւ հաստատում է իր աշխատակարգը, հաստատում քարտուղարության աշխատակարգը;

5.8.3. Հրավիրում է Ազգային խորհրդի համագումար;

5.8.4. Ընդունում է Ազգային խորհրդի իսկական անդամներին, կասեցնում նրանց անդամությունը մինչեւ առաջիկա համագումարի նիստը, որը վավերացնում է որոշումը;

5.8.5. Ընդունում է Ազգային խորհրդի թեկնածու անդամներին եւ դիտորդներին, կասեցնում նրանց անդամությունը;

5.8.6. Նշանակում եւ պաշտոնից ազատում է գլխավոր քարտուղարին;

5.8.7. Սույն Կանոնադրությամբ եւ նրա հիման վրա ընդունված այլ կետերով իրեն տրված իրավասությունների սահմանում կարող է ստեղծել մշտական եւ ժամանակավոր հանձնաժողովներ եւ հաստատել դրանց աշխատակարգը;

5.8.8. Վավերացնում է նախագահի կողմից կնքված պայմանագրերն ու համաձայնագրերը;

5.8.9. Տնօրինում է Ազգային խորհրդի ֆինանսական միջոցները եւ գույքը;

5.8.10. Կարող է քննել եւ լուծել ցանկացած հարց, բացառությամբ համագումարի իրավասությանը վերապահվածներից:

5.9. Ազգային խորհրդի նախագահը.

5.9.1. Ընտրվում է համագումարի կողմից;

5.9.2. Ներկայացնում է Ազգային խորհուրդը պետական եւ հասարակական մարմինների հետ փոխհարաբերություններում;

5.9.3. Ազգային խորհրդի անունից կնքում է պայմանագրեր եւ համաձայնագրեր, ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր;

5.9.4. Համակարգում է Ազգային խորհրդի աշխատանքային ստորաբաժանումների (հանձնաժողովներ եւ այլն) գործունեությունը;

- 5.9.5. Բացակայության կամ անաշխատունակության դեպքում նախագահը կարող է իր իրավասությունների որոշ մասը ժամանակավորապես փոխանցել նախագահության անդամներից որեւէ մեկին;
- 5.9.6. Ապահովում է Ազգային խորհրդի ղեկավար մարմինների որոշումների իրականացումը, ստորագրում է նախագահության կողմից ընդունված որոշումները եւ Ազգային խորհրդի այլ փաստաթղթերը, եթե այլ բան չի նախատեսված սույն կանոնադրությամբ;
- 5.9.7. Տալիս է հանձնարարականներ նախագահության անդամներին եւ գլխավոր քարտուղարին;
- 5.9.8. Հաշվետու է համագումարին:

- 5.10. Ազգային խորհրդի հիմնական աշխատանքային մարմինը քարտուղարությունն է, որը ղեկավարում է համագումարի կողմից ընտրված գլխավոր քարտուղարը: Քարտուղարությունը ապահովում է Ազգային խորհրդի ընթացիկ գործունեությունը: Քարտուղարության կառուցվածքն ու հաստիքները հաստատում է նախագահությունը:

- 5.11. Գլխավոր քարտուղարը.
 - 5.11.1. Գլխավորում է եւ ղեկավարում Ազգային խորհրդի քարտուղարության աշխատանքը;
 - 5.11.2. Մասնակցում է նախագահության նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

- 5.12. Ազգային խորհրդի վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է Ազգային խորհրդի համագումարի կողմից: Վերստուգիչ հանձնաժողովի նիստերը գումարվում են առնվազն 3 ամիսը մեկ անգամ, որոնք վարում է վերստուգիչ հանձնաժողովի նախագահը: Վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքը որոշվում է սույն կանոնադրությամբ եւ վերստուգիչ հանձնաժողովի կողմից ընդունված եւ նախագահության կողմից հաստատված աշխատակարգով:

- 5.13. Ազգային խորհրդի վերստուգիչ հանձնաժողովը.
 - 5.13.1. Հսկողություն է իրականացնում Ազգային խորհրդի մարմինների կողմից կանոնադրության եւ որոշումների կատարման նկատմամբ;

- 5.13.2. Կասեցնում է նրանց որոշումները, եթե դրանք չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությանը եւ սույն կանոնադրությանը;
- 5.13.3. Վերահսկողություն է իրականացնում Ազգային խորհրդի մարմինների ֆինանսական գործունեության նկատմամբ;
- 5.13.4. Քննարկում է Ազգային խորհրդի անդամ-կազմակերպությունների իրեն ուղղված բողոքներն ու գանգատները:
- 5.14. Ազգային խորհրդի ավագների խորհուրդը.
- 5.14.1. Ազգային խորհրդի աշխատանքներին, Հայաստանի երիտասարդական, ուսանողական կյանքի կազմակերպման եւ զարգացման գործընթացներին զգալի ավանդ եւ ներդրումներ հանդես բերած եւ երիտասարդական հասարակական գործունեությունից դեպի հանրապետության հասարակական, քաղաքական, մշակութային կամ ստեղծագործական կյանքի այլ ասպարեզներում իրենց գործունեությունը շարունակող ակնառու գործիչների մասնակցությամբ ձեւավորվում է ազգային խորհրդի ավագների խորհուրդը;
- 5.14.2. Ավագների խորհուրդը ազգային խորհրդի խորհրդատվական մարմին է, որի նպատակն է նախկինում ազգային խորհրդի գործունեությանը ակտիվ մասնակցություն հանդես բերած իր անդամների միջոցով ազգային խորհրդի համար ապահովել անհրաժեշտ քաղաքական, խորհրդատվական, տեղեկատվական, մեթոդական, լոբբիստական, հովանավորչական եւ այլ կարգի աջակցություն ու օժանդակություն: Ազգային խորհրդի նախկին ակտիվ անդամների հասարակական, ստեղծագործական ու մասնագիտական ունակությունները այսուհետ եւս հնարավորինս ծառայեցնել Հայաստանի երիտասարդական կյանքի կազմակերպման ու զարգացման գործընթացներին;
- 5.14.3. Ավագների խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, ազգային խորհրդի նախագահի կամ նախագահության կողմից, ինչպես նաեւ ավագների խորհրդի անդամների կեսից ավելիի նախաձեռնությամբ: Ավագների խորհրդի նիստերին պարտադիր մասնակցում է ազգային խորհրդի նախագահը կամ նրա կողմից լիազորված անձիք;
- 5.14.4. Ավագների խորհուրդը հարցեր քննարկում է ազգային խորհրդի ղեկավար մարմինների առաջարկությամբ կամ իր նախաձեռնությամբ, որոնց կապակցությամբ հնարավորության սահմաններում հանդես է բերում համապատասխան աջակցություն ազգային խորհրդի ղեկավար մարմինների

կողմից մատնանշված հարցերի ուղղությամբ, կամ վերջիններիս է ներկայացնում խորհրդատվական բնույթի առաջարկներ, գործունեության ծրագրեր եւ այլն, որոնք ազգային խորհրդի ղեկավար մարմինների կողմից ենթակա են պարտադիր քննարկման;

5.14.5. Ավագների խորհրդի անդամներն ընտրվում են ազգային խորհրդի համագումարում՝ ներկաների ձայների 2/3-ով:

5.15. Ազգային խորհրդի նախագահությունը օրենքով սահմանված կարգով կարող է հիմնել իր ներկայացուցչությունները, բաժանմունքները:

5.16. Բաժանմունքների եւ ներկայացուցչությունների ստեղծման ու գործունեության կարգը որոշվում է Ազգային խորհրդի նախագահության որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

5.17. Ազգային խորհրդի անդամ-կազմակերպություններին եւ արտասահմանի երիտասարդական միավորումների միջեւ միջազգային փոխանակման համար, ինչպես նաեւ Ազգային խորհրդի զարգացման ու անդամ-կազմակերպությունների արտասահմանում ժամանակավորապես գտնվող ներկայացուցիչների հետ աշխատանքի կազմակերպման համար, նրանց մասնակցությամբ, կարող են ստեղծել Ազգային խորհրդի արտասահմանյան բաժանմունքներ, եթե դա չի հակասում տվյալ պետության օրենսդրությանը: Ազգային խորհրդի արտասահմանյան բաժանմունքի կազմակերպման ու գործունեության կարգը որոշվում է Ազգային խորհրդի նախագահության որոշմամբ:

6. ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Ազգային խորհրդի միջոցները գոյանում են.

6.1.1. Անդամ-կազմակերպությունների մուտքավճարներից եւ անդամավճարներից;

6.1.2. Նվիրատվություններից, կտակներից եւ հանգանակություններից, պետական, մասնավոր տնտեսավարող եւ հասարակական կազմակերպությունների մասհանումներից, դրամաշնորհներից;

- 6.1.3. Իր կողմից հիմնված տնտեսական ընկերությունների արտադրական, ամբարտանգական, միջնորդական եւ այլ, օրենքով չարգելված, գործունեության եկամուտների մասհանումներից;
- 6.1.4. ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:
- 6.2. Ազգային խորհուրդը կարող է ունենալ շարժական եւ անշարժ գույք, որը կարող է ձեռք բերել սեփական միջոցներով, ստանալ նվիրատվությամբ կամ կտակի կարգով:
- 6.3. Ազգային խորհրդի միջոցները կարող են ծախսվել միայն սույն կանոնադրության նպատակների եւ խնդիրների իրականացման համար:
- 6.4. Կազմակերպչական ծախսերի մասնաբաժինը չի գերազանցում տարեկան ընդհանուր ծախսերի 70 %-ը:

7. ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

- 7.1. Ազգային խորհուրդը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ ՀՀ Արդարադատության նախարարության կողմից պետական գրանցման պահից, ունի խորհրդանիշ, իր անվամբ կնիք, պաշտոնաթղթեր, ինքնուրույն հաշվեկշիռ, բանկում ունի հաշվարկային հաշիվ ինչպես ազգային դրամով, այնպես էլ տարադրամով:
- 7.2. Ազգային խորհրդի խորհրդանիշն է՝ շրջանաձեւ պատկերի վերին մասում պատկերված է Արարատ լեռը, ներքեւում՝ դեպի ներքեւ ուղղված թուր, որի վրա տեղադրված է բացված գիրք:
- 7.3. Ազգային խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է լրիվ տնտեսաշարժի, ինքնաֆինանսավորման եւ ինքնակառավարման սկզբունքով:

8. ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 8.1. Ազգային խորհրդի գործունեության դադարեցումը կատարվում է նրա վերակազմավորման (միավորման, բաժանման, միաձուլման) կամ լուծարման ձեռով: Ազգային խորհրդի վերակազմավորումը կատարվում է համագումարի որոշմամբ՝ ընդունված համագումարի պատվիրակների ընդհանուր թվի ձայների 2/3-ի կողմ քվեարկելու դեպքում կամ դատարանի որոշմամբ:
- 8.2. Ազգային խորհուրդը կազմակերպության լուծարման մասին պարտավոր է հնգօրյա ժամկետում գրավոր հայտնել Արդարադատության նախարարությանը:
- 8.3. Ազգային խորհուրդը Արդարադատության նախարարության համաձայնությամբ կազմավորում է լուծարքային հանձնաժողով եւ օրենքով սահմանված կարգով սահմանում է լուծարման կարգը եւ ժամկետները:
- 8.4. Ազգային խորհրդի լուծարման դեպքում լուծարքային հանձնաժողովը պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, լուծարման մասին որոշում կայացրած մարմնի կողմից սահմանված կարգով, օգտագործում է կազմակերպության կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացման համար, եթե դա անհնարին է, ապա գումարը փոխանցվում է պետական բյուջե: